# Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի թիվ 71-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**“______”__________2018 թ.**
**N______Ն**

**ք. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 71-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 3-ի նիստի թիվ 2 արձանագրությունը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2008 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակը հաստատելու մասին» թիվ 71-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության

հաճախականությունների բաշխումների աղյուսակում /այսուհետ` աղյուսակ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 1-ին ենթակետի «0-842.0ՄՀց» բառերը փոխարինել «821.0-842.0ՄՀց» բառերով, իսկ «852.0-880.0ՄՀց» բառերը փոխարինել «862.0-880.0ՄՀց» բառերով:
2. Աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի 3-րդ ենթակետի «1765-1805ՄՀց» բառերը փոխարինել «1785-1805ՄՀց» բառերով և «1860-1910ՄՀց» բառերը փոխարինել «1880-1910 ՄՀց» բառերով:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

**“______”__________2018թ**

**ք. Երևան**